ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին որոշման նախագծի

Նաիրի համայնքի Զորավան գյուղում գտնվող, համայնքային սեփականության հանդիսացող 07-031-0209-0055 կադաստրային ծածկագրի 15,08719 հա հողամասից 13,1900 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության ընդերքի օգտագործման համար տրամադրված հողերի կատեգորիա փոխադրելու վերաբերյալ: Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2/փ-316 դրական եզրակացությունը՝ ներկայացված որոշման նախագծով առաջարկվում է փոփոխել հողամասի նպատակային նշանակությունը և արտացոլել այն Զորավան բնակավայրի գլխավոր հատակագծում:

ՏԵՂԵԿԱՆՔ

Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Նաիրի համայնքի բյուջեում ծախսերի էական ավելացման կամ նվազեցման մասին

Համայնքային սեփականության հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին որոշման ընդունումը Նաիրի համայնքի 2025 թվականի բյուջեում եկամուտների ավելացում չի ենթադրում:

Աշխատակազմի քաղաքաշինության բաժնի պետի

պարտականությունները կատարող՝ Ա. Մովսեսյան